

ԳՄԴ 84 Հ7-5

գ 313


Եղբորս՝ Անդրանիկ Գրիգորյանի
և նահատակ համազյուղացիներին
անմար իշխատակին

գրեգորյան Ա.Ա.

գ 313. Լոռության րոպե: Պոեմ (Արիս Գրիգորյան),
Ստեփանակերտ, 2000, էջ:

Բանաստեղծ, լրագրող Արիս Գրիգորյանի «Լոռության րոպե» պյունք նվիրված է Արցախյան ազատամարտում նահատակված կոճողուցի (ԼՂՀ, Սարսակերտի շրջան) տասնինգ ամսնվեր մարտիկների հիշատակին:

© Արիս Գրիգորյան, 2000



**Ի
Բ
Բ
Ե
Վ ՍԿԻԶԶ**

Եվ պիրկ ձգվում է լոտիթյան րոպեն,
 Անլոր ծանրանում հողուս ծալքնում...
 Սիրտ է քրքրում տփայտանքի թե՞ - ն,
 Որ տառապանք է անտարբեր քնում:

Տխուր նմ, ցավիս սարենը նն փլվնլ,
 Մենակ նմ հիմա, սակայն ոչ անհոյս,
 Եվ ժամանակի դավին անտարբեր
 Նոր շիվ է աճում տապալված կաղնուց:

...Թուրքը նկնլ է հասնլ կոճողուտ,-
 Մեր օջախին է տիրանալ ուզում,
 (Օ՛, ճակատագիր դառն ու անողոք,
 Քմահաճորեն ո՞նց նս հանդուրժում...

Ո՞նց նս թողնում, որ սուրբ նրազը մեր
 Անհոյս թարտա, կրնկահարվի,



Եվ հագուրդ տալով կրբերին իր նն՝
Թուրքը լիայօք հիանա, երճվի):

Ու ելան անվախ տղաները մեր,
Հոգում վառ սնըր հայրենի հողի,
Օր ավերակն քնրդերն անառիկ-
Որջնը՝ մեր շնոն ասպաւուակողի...

Ու ելան... Սակայն արյուն էր, ավեր,
Եվ պատերազմում աշխարհակործան
Ընկան տղները՝ սրտերում արև,
Սրտերում գարուն, երազն՝ իրական...

- ԱՐԹՈՒՐ ՇՈՒՐԱՅԻ ԴԱՆԻԵԼՅԱՆ:
- Ե'ս նմ...

- ԳՈՒՐԳԵՆ ՇՈՒՐԱՅԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ:
- Ե'ս նմ...

- ՄԵՐՈՒԺԱՆ ՍՈՒՐԵՆԻ ՍԱՐԳՍՅԱՆ:
- Ե'ս նմ...

- ԱՇՈՏ ՌՈԲԵՐՏԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ:
- Ե'ս նմ...

- ԳԱՐԻԿ ՓԱՐԱՎՈՆԻ ՀԱՅՐԻՅԱՆ:
- Ե'ս նմ...
կարոտել նմ, մա~ ...

- ՀՐԱՆՏ ՅՈՒՐԻ ԽԱԶԱՏՐՅԱՆ:
- Ե'ս նմ...

- ՌՈԲԵՐՏ ՌԱԶԻԴԻ ԾԱՄԻՐՅԱՆ:
- Ե'ս նմ...

Մայրս հիվանդ էր՝ անկողնուն գամված,
Բայց հայրենիքս թանկ էր ավելի...
Հայրս դիմանալ չկարողացավ...
Մայրս էլ գնաց...

- ՄԵԽԱԿ ԶԱՎԵՆԻ ԴԱՆԻԵԼՅԱՆ:
- Ե'ս եմ...
- ԲՈՐԻՍ ՄԻԾԱՅԻ ՍԻՄՈՆՅԱՆ:
- Ե'ս եմ...
- ԱՐԹՈՒՐ ՌԱԶՄԻԿԻ ԹԱՂԵՎՈՍՅԱՆ:
- Ե'ս եմ...
- ՄԱՆՎԵԼ ԱՐՏՈՒՇԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ:
- Ե'ս եմ...
- ԱԶԱՏ ԾԱՀԵՆԻ ԽԱԶԱՏՐՅԱՆ:
- Ե'ս եմ...
Դատրիկու ծնվեց, իսկ նա... չկայի,
Բայց իմ կամքով է նա Ազատուիի...
- ԿԱՄՈ ԱԼՔԵՐՏԻ ԱԴԱՄՅԱՆ:
- Ե'ս եմ...
- ԱՐԱՐԱՏ ԱԼԵՔՍԵՅԻ ՎԱՆՅԱՆ:
- Ե'ս եմ...
- ԱՆԴՐԱՆԻԿ ԱՐՄԵՆԻ ԳՈՒԳՈՐՅԱՆ:
- Ե'ս եմ...
Ներու՞մ եք, որ ձեզ «խաքնցի»
Ու էլ ետ չնկա...
Ներու՞մ եք, ասեք, թե՞ խոռվ եք դեռ:
- ...Ընկան, որ մնան,
Ընկան, որ հիշվեն:
Որ սերունդները մի շտ հպարտանան:
- ...Իսկ նրկարում է լողիքան բոպեն:



ԱՐԹՈՒՐ ՀՈՎՀԱՆՆԻ
ՂԱՍԻԵԼՅԱՆ
(1966-1992)

Ծնվել է 1966-ի
փետրվարի 11-ին:
Միջնակարգն ավ-
արտելուց հետո սո-
վորել է Երևանի թ. 11
այրոֆտեխնոսումնա-
ռանում տիրապե-
տել լուսանկարչա-
կան արվեստին: Այն-
ուհետև զորակոչվել
է Խորհրդային բա-
նակ, եղել է գեներա-
հրթիռային կայանքի
հրամանատար:

Երբ սկսվել է Ար-
ցախյան շարժումը
բոլորանվեր ծովվել
է այդ սրբազան պայ-
քարին:

Զոհվել է 1992-ի
մարտի 10-ին, Սըր-
իավենդի անհավա-
սար մարտում:

Ե

Վ ԴԱԼԵՒԼՅԱՆ
ԱՐԹՈՒՐԸ ՀԱՆԿԱՐԾ
ԱՓ-ԱՋԻՆՆ ԱՅՍՊԵՍ
ԽՈՍՔԵԼ ՍԿՍԵՑ.

- Առաջին շարքում ն'ս պիտի լինեմ,
Ես պիտի լինեմ մարտո՞ւմ առաջին:

Առաջին մարտում, ինչ էլ որ լինի,
Ես պիտի կռվեմ շարքո՞ւմ առաջին:

Իսկ թե առաջին մարտում պիտ
ընկնեմ
Մոռ ընկնեմ միայն շարքո՞ւմ
առաջին...

Գ
Ա
Բ
Գ
Ե
Հ
Ը

ԱՍԱՅ.

- Երջանկությունս, իմ Արցախ
աշխարհ,
Քո անունն է լուս՝ իմ բախտի այունը,
Ապրել քնզ համար, կովել քնզ համար,
Չոհվել քնզ համար՝ Երջանկություն է:

Ապրում նմ կյանքում միշտ քո'
հավատով
Ու քո' սիրով նմ շնչում նս կյանքում,
Քայլում լուսաշող քո' ճանապարհով,
Արցախյան երկրի հանրապետություն:

Դժվար է ապրել առանց հավատի, -
Հավատոր պեսոր է դրոշ դարձնել,
Հավատով հաղթել նենգին, կավատին,
Եվ անհավատին հավատքի քնրել:

Երջանկությունս հենց այս է, որ կա,
Երջանկությունս ազատ ապրեն է,
Երջանկությունս կյանքն է արևկա
Ու մարդկանց ճամփին միշտ

արևնին է:

Դու' նս, Արցախ իմ, Երջանկությունս,
Մերս, նրազս, հավատս դու' նս,
Ես՝ ի՞նչ՝ նոյնինկ կնս ակնթարթ չկամ,
Իսկ դու մի ամբողջ

հավերժություն նս...



ԳՈՒՐԳԵՆ ՇՈՒՐԱՅԻ
ԿԱՐԴԱՅՅԱՆ
(1968-1992)

Ծնվել է 1968-ի մայիսի
18-ին, Մինգեչավոր
տեղակոխսված կոճո-
ղոտուու ընտանիքում:
Ավարտել է Երևանի մե-
թենաշինական տեխնի-
կումը, իսկ 1986-88-ին
ծառայել Խորհրդային
բանակում: Զորացրվե-
լուց հետո վերադար-
ձել է հայրենի գյուղ, ա-
մուսնացել, իսկ մեկ
տարուց հետո տեղա-
փոխվել Ստեփանա-
կերտ, աշխատանքի ան-
ցել կոնդենսատորների
գործարանում: 1991-ին
Արցախյան շարժումն իր
ալիքների մեջ է առել
նաև Գուրգենին:

Չոհվել է 1992-ի հու-
նիսի 10-ին, Զարեք-
տարում: Հետմահու
պարզեատրվել է «Մա-
րտական խաչ» 2-րդ
աստիճանի շքանշանով:



ՍԵՐՈՒԺԱՆ
ՍՈՒՐԵՆԻ
ՍԱՐԳՍՅԱՆ
(1966-1992)

Ծնվել է 1966-ի հուլիսի 31-ին: Միջնակարգն ավարտելուց հետո ծառայել է Խորհրդային բանակում, այնուհետև աշխատանքի անցել Մարտունի ք. 28 շրջկենտրոնայց-ված շարասյունում: 1990-ից զյուղի Ֆիդայական ջոկատում էր: Պահակությունը է արել սահմանային գոտում, մասնակցել է մի շարք մարտերի: 1992-ի հունիսի 10-ին վիրավորվել է Զարեքտարում, ծանրը վիճակում տեղափոխվել Երևանի Ն. Նորիք 3-րդ զանգվածի հիվանդանոց, որտ և հունիսի 21-ին մահացել է:

Մ
Ե
Ր
Ա
Ժ
Ա
Հ
Ա
Ա
Վ

- Ես մարտի կնկնեմ առավոտ ծնգին,
Եմ ընկերներով կզնամ առաջ,
Եմ ընկերներ՝ արծիվներ արի, -
Զգիտնեն անկում, չզիտնեն նահանջ:

...Իսկ թե ինչ որ տեղ ինձ դարանակալ
Մահն է սպասում ժանիքը սրած -
Թող չփազի՝ պարտք ունեմ նս դեռ,
Պարտքս կատարնեմ այցի գա թող ինձ..

(Կարծում նմ պարտք լավ

կատարնցի):

Ա
Շ
Ա
Տ
Հ
Ա ԱՍՏ.

- Մենք մարտնի մնջ կոփված
Եղբայրությունն ննք սիրում...

Երք որ տկած ուս-ուսի
Մարտնչում նն քաջարի
Ընկերննրը դիրքային,
Նրանք, իրոք, հաղթում նն
Նոյնիսկ զորե՛ղ թշնամուն:
...Ու նշում ննք քաջաքար
Թուրքնի դեմ մոլեզնած:

Թող չկարծեն իմ նրկրի
Զարնկամները բոլոր,
Թն քնած ննք մենք այստն,
Նրանք թռող լավ իմանան
Գիշերննրը չի քնում
Հայրենիքի զինվորը,
Զգոն աչքով հսկում է
Խաղաղությունն Արցախի:

Մենք պայքարով ձնոք քնրված
Խաղաղությունն ննք սիրում:

...Այս, ապրում նք այսօր
Խաղաղ կյանքով, առանց... մնաq,
Եվ ոչ ոք չի խանգարի
Ձեր այս խաղաղ նրթը, ձնաq:
Բայց թե հանկարծ թուրքը ննո
Բանակներով նորից գա՝
Մենք զինավառ կննտվենք -
Գողենք նրախը նրա:

Որ արյունով ձնոք քնրված
Խաղաղությունը մնա...



ԱՇՏՈ ՈՂՋԵՐԻՒ
ԱԿԵՏԻՍՅԱՆ
(1967-1992)

Ծնվել է 1967-ի սեպտեմբերի 3-ին, Մարտակերտ քաղաքում: Դպրոցն ավարտելոց հետո սովորել է Ն.Հոռարադի թ.120 պրոֆեսիոնալ համալսարանում, ծառայել Խորհրդային բանակի տանկային զորքերում: Շարժման սկզբանից ընդգրկվել է Մարտակերտի հնքնապաշտպանական ջոկատի կազմում: Որպես տանկի նշանառու մասնակցել է շրջանի բոլոր զյուղերի ազատազրուման համար մղված մարտերին: Զոհվել է 1992-ի հուլիսի 15-ին, Մաղավուզի բարձունքներում ծավալված մարտում:



ԳԱՐԻԿ ՓԱՌԱՎՈՒՆԻ
ՀԱՅՐԻՅԱՆ
(1971-1992)

Ծնվել է 1971-ի հոկտեմբերի 9-ին: Միջնակարգն ավարտելուց հետո անմիջապես ընկեր է Արցախյան շարժման հորձանուտը՝ միաժամանակ սովորելով Ստեփանակերտի գյուղատնտեսական տեխնիկումում: 1989-ին զորակոչվել է Խորհրդային բանակի շարքերոց: Զորացրվելուց հետո գյուղու ֆիդայական ջոկատի կազմում մասնակցել է Մարտակերտի, Հասանղայայի, Մարադայի, Բաշ-Գյունեփայայի և Սրիսավեմդի թեժ մարտերին: Չոհվել է 1992-ի հուլիսի 30-ին, Չափար գյուղի պաշտպանության համար մողկած թեժ մարտում:

Ե Վ ՊԱՐԻԿՆ ԱՍԱՅ.

- Մեր հին գյուղում հիմա թուրքի կռունկ,
Մեր հին հողի վրա թուրքի հնարքե՞ր,
Մենք քնո՞վ ենք անցնե՞լ կանչե՞,
Կռունկ,
Թե արթուն ենք՝ ու՞ր է կռիվը մնը:

Կանչե՞, կռունկ, կանչե՞ գնանք ի
մարտ,
Կանչե՞, կռունկ՝ քանի ջահել ենք
մենք,

Կանչե՞, կռունկ՝ էլի թող շատանանք,
Կանչե՞, կռունկ՝ մենք դնու պնտք է
կռվենք:

Մեջքը մնը չի ճկվի նրբեք մարտում,
Մենք դնու պնտք է կռվենք, պնտք է
կռվենք,
Ծունկ չենք չորի նրբեք, կանչե՞,
կռունկ,
Կանչե՞, կռունկ՝ գնանք կռվենք-
մնոնենք:

Գնանք կռվենք-մնոնենք, հաղթենք ու
գանք,
(Եվ կսազի՞, արդյոք, մնա պարտություն,
Մենք նդե՞լ ենք անպարտ, նդե՞լ ենք,
կա՞նք),
Կանչե՞, կռունկ՝ գնանք, կանչե՞,
կռունկ...



Ե Վ ՀՐԱՄՏԵ ԱՍԱՅ.

- Ինձ ցավ տուր, -
Ես ցավը հեշտ եմ տանում:
Տառապանքը, որ ծնվել է սիրուց, -
Իմ սիրտն է:
Իսկ առանց սրտի՝
Մեռնելը դժվար է խիստ:
...Ապրե՞լը՝
Անիմաստ ու սին:
...Իսկ տառապանք՝
Իմ Արցախն է հեզ...

ՀՐԱՄՏ ՅՈՒՐԻԻ
ԽԱԶԱՏՐՅԱՆ
(1971-1992)

Ծնվել է 1971-ի
փետրվարի 21-ին:
Ավարտել է գյուղի
միջնակառա դպրո-
ցը, ծառայել Խորհր-
դային բանակում,
այնուհետև սովորել
Ն.Հոռարարի թ.120
պրոֆտեխնոլոգիան
բանում:

1992-ից անդամա-
գրվել է գյուղի ֆի-
դայական ջոկա-
տին, ճասնակցել մի
շարք ռազմագոր-
ծողությունների (Ար-
դաբան, Քելբաջար,
Մարտակերտ, Կի-
չան, Չափառ):

Զոհվել է 1992-ի
օգոստոսի 22-ին,
Ղոմբոնի մերձա-
կայքում:



ՈՂԲԵՐԸ ՌԱՇԻԴԻ
ՇԱՄԻՐՅԱՆ
(1967-1993)

Ծնվել է 1967-ի փետրվարի 12-ին: Սովորել է գյուղի միջնակարգ դպրոցում, ծառայել Խորհրդային բանակի շարքերում: Երբ սկսվել է Արցախյան ազգային ազատագրական շարժումը՝ անմիջապես անդամագրվել է գյուղի նոր կազմավորվող կամավորական ջոկատին: Մասնակցել է մի շարք ճարտերի:

Զոհվել է 1993-ի հունվարի 20-ին, հայրենի գյուղի պաշտպանության ժամանակ, հակառակորդի օդուժի հերթական ռմբակոծության հետևանքով:

Հ
Ա
Բ
Ե
Բ
Տ

Ն ԸՆԴՀԱՏԵՑ ՀՐԱՄԻՒ ԱՍՎՅՑ.

- Արցախը հենգ չէ,
Ոստիսին տենգ է,
Ոստիսի սրտին՝ սուր ու դանակ,
Արցախը հուր է,
Թշնամուն՝ սուր է,
Թշնամու մոլիսը մարող բանակ:

Անհուն է, խննջ է,
Բունցք է, զենք է,
(Արցախում կոփ՞վ, ավնո-ավա՞ր...):
Եվ նա չի պարտվի,
Ոնց Ավարայրի
Մեր այն հին կովում օրհասական:

Ո՛չ, նա չի պարտվի,
Կվանգնի ոտքի,
Կվապի որդու՝ Դավթի գոտին,
Որ զետնի նրան
Մի ակնթարթում-
«Յոթ-միլիոնանոց» իր ոստիսին...

...Տնաս՞ր, ոնց գետնեց ու չորեց ըկին:
Ասում էի, չէ՞...



Մ
Ե
Խ
Ա
Կ

Հ ԽՈՍՏԵՅ ՍԱՐԵՐԻ ՄԱՍԻՆ, ԱՍԱՅ.

- Մեր սարնը վնի սարնը են,
Հրաշքներ են մեր սարնը,
Մարմնավորված երազներ են,
Մուրազներ են մեր սարնը:


Մեր սարնը շատ բարի են,
Հանճարնեղ են մեր սարնը,
Մեզ համար են հավերժ կանգնել
Մեր թև-թիկունք՝ մեր սարնը...

ՄԵԽԱԿ ԶԱՎԵՆԻ
ԴԱՍԻԵԼՅԱՆ
(1960-1993)

Ծնվել է 1960-ի
հոկտեմբերի 18-ին:
1978-ին ավարտել է
գյուղի միջնակար-
գը, իսկ 1982-ին
Մարտավերտի ավ-
տոդպրոցը: Աշխա-
տել է շրջկենտրոնի
շինարարական բօ-
րդադրում:

1990-ից նվիրվել է
Արցախյան ազա-
տամարտին: Իր
ազատամարտիկ
ընկերների հետ
շատ մարտերի է
նասնակցել նա:

Զոհվել է 1993-ի
փետրվարի 4-ին,
հայրենի գյուղի ա-
զատագրման հա-
մար մղված մար-
տում:



ԲՈՐԻՍ ՄԻՇԱՅԻ
ՍԻՄՈՆՅԱՆ
(1958-1993)

Ծնվել է 1958-ի դեկտեմբերի 19-ին: Գյուղու 8-ամյա դպրոցն ավարտելուց հետո 1974-77-ին սովորել է Ն.Հռուսարդի թ.120 պրոֆտեխնուսումնարանի մեխանիզացիայի բաժնում, 1977-79-ին՝ ծառայել Խորհրդային բանակում: Զորացրվելուց հետո ամուսնացել է և անմիջապես աշխատանքի անցել հայրենի գյուղի տնտեսությունում ու մինչև Արցախյան շարժման սկիզբը կատարել տրակտորիստի ու կոմբայնավարի աշխատանք:

Ժատերի պես նվիրվել է հաճախողովողական պայքարին:

Զոհվել է 1993-ի ապրիլի 14-ին:


Բ
Ա
Բ
Ի
Ս

Հ. ԽՈՍԵՅ ՔԱՐԵՐԻ ՄԱՍԻՆ, ԱԱԱՑ.

- Քարեր իմ, հայրենի քարեր,
Չնմ ուզում խոսն ձեր հանդեա
տածած

Իմ ապրումների, խոհերի մասին:
Սակայն չնմ կարող
Այդ մասին կյանքում լոն, չխոսն,
Չտսն, որ ատանց ձեզ կյանքում նրբնք
Չնմ կարող ապրն...

Որ ձեր սիրով եմ շնչում ես կյանքում,
Իմ լանաշխարիք հոգուս հնտ կապող
Հայրենի քարեր...



Հ
Մ

Կ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԱՐԹՈՒՐԸ ԱՎԱՅՑ.

- Եվ հավերժության խորհուրդն է ահա՝
Մեզանից առաջ լնոներն են ծնվել
Ու մեզ հետ ապրում, կանգուն են
իմա, Մեզնից հետո էլ դեռ պիտի ապրեն
Դարնբում գալիք՝ հավիտյան անմահ:

...Մենք՝ մահկանացու, բայց
անմահացանք՝
Մահով իմացյալ...

Արթուր ՌԱԶԻԿԻ
ԹԱԴԵՎՈՍՅԱՆ
(1975-1993)

Ծնվել է 1975-ի
մարտի 1-ին, Սար-
տակերտ քաղա-
քում, Կոճողուցու
ընտանիքում: Սովո-
րել է տեղի թ. 1 միջ-
նակարգ դպրոցում,
իսկ այնուհետև տե-
ղափոխվել Կոճո-
ղու և 1992-ին, զյու-
ղի միջնակարգն ա-
վարտելուց հետո,
անդամագրվել կա-
մավորական ջոկա-
տին:

Մասնակցել է բազ-
մաթիվ մարտերի:

Զոհվել է 1993-ի
ապրիլի 15-ին:



ՄԱՆՎԵԼ ԱՐՏՈՒՐԻ ԿԱՐԴԱՆՅԱՆ

(1974-1993)

Ծնվել է 1974-ի սեպտեմբերի 23-ին: 1981-ից հաճախել է դպրոց, սովորել մինչև 7-րդ դասարանը: 1992-ից ծառայում էր «Միրուժի» մոտ, հետո՝ «Խալաստոյի» գումարտակում: Օգնում էր ավագ ընկերներին, կատարում հրաճանաւարների հանձնարարությունները՝ սընդուաճներք էր տեղափոխում, գենք ու զինամթերքի պակասը լրացնում:

Զոհվել է 1993-ի հուլիսի 5-ին, Մաղավուզի բարձունքներում մղված մարտում:

Հ Ս Կ ՄԱՆՎԵԼՆ ԱՍԱԾ.

- Մերանում են լնոները մեր,
Մերանում ենք նու մենք,
Բայց մնում են լնոները դեռ,
Իսկ մենք կյանքից գնում ենք:

Հրաշք լիներ, այնպես լիներ՝
Մենք էլ հավերժ մնայինք,
Մեր լնոներին թիկն տված
Կյանքում անվերջ ապրեինք:

...Բայց չտրվեց ինձ ծերանալ, -
Ընկա մարտի թնժ պահին,
Որ բարի օր, բարի գարուն
Բացվի Արցախ աշխարհին...

Ի
Մ
Կ

ԱԶԱՏՆ ԱՅՍՊԵՍ ԽԱՍԵԼ ՄԿՄԵՑ, ԴԻՄԵԼՈՎ ԿԱՌՁՆ ԻՐ ԹԵՐԵԶԱՅԻՆ.


- Կարծեն թե նրբնք ինձ չեն տեսնել,
Չեն սնդմնել ձեռքու նրբնք կյանքում,
Բայց... հանդիպում եմ քնզ հետ
միշտ էլ
Երազննրիդ մնջ՝ քուն, թե արթուն:

Ծրջում ենք մենակ գիշեր-ցերեկ
Մեր կոճողուում Աստծո թաս,
Ես պատմում եմ քնզ մարտնրից թեժ,
Բայց արթնանում եմ՝ թախծում
«Հկա՞ն»:

Իսկ ասում են, թե Ցնկ-ձորում են...
Իբր... զոհվել եմ արկներից կույր,
Մի՞ թե ճիշտ է դա, ճի՞շտ է, թերենզ,
Ես չեմ հավատա նրբնք կյանքում:

Ես ապրում եմ, կամ, ես չեմ զոհվել,
(Ստում են նրանք, ստում, անգին),
Ես հանդիպում եմ քնզ հետ միշտ էլ
Քո նրազննրի ճանապարհին...

...Բայց մոռացա քնզ հիշեցնել,
Որ... լավ նայեն իմ նրեխային...



ԱԶԱՏ ՇԱՀԵՆԻ
ԽԱԶԱՏՐՅԱՆ
(1970-1993)

Ծնվել է 1970-ի փետրվարի 5-ին:
Ավարտել է Կոճողուտի միջնակարգ դպրոցը, հետո ծեռք բերել վարսավիրի մասնագիտություն:
1988-90-ին ծառայել է Խորհրդային բանակում, զորացրվելուց հետո՝ անմիջապես ամուսնացել:
Գյուղում մեկ տարի աշխատելուց հետո տեղափոխվել է Ստեփիանակերտ և ծառայության անցել տանկերի նորոգման գումարտակում: Մասնակցել է Ղազանչի, Չղդրան, Կիշան և այլ գյուղերի համար մղված մարտերին:
Զոհվել է 1993-ի հոկտեմբերի 17-ին,
«Ցեխ-օդրում»:



ԿԱՄՈ ԱԼԲԵՏԻ

ԱՂԱՄՅԱՆ

(1959-1993)

Ծնվել է 1959-ի հունվարի 4-ին: Միջնակարգ կրթություն ստանալուց հետո սովորել ու գեղագանցության դիպլոմով՝ ավարտել է Ստեփանակերտի զյուղատնտեսական տեխնիկումի և հաշվառահական բաժինը և աշխատանքի անցել հայրենի զյուղի տնտեսությունում: Երբ սկսվել է Արցախյան շարժումը՝ նա ևս հայտնվել է ազատամարտիկների շարքերում: Եղել է Վանքի պաշտպանական դիրքերում, թելբաջարում: Զոհվել է 1993-ի դեկտեմբերի 27-ին, Մաղավուզի մատուցներում:

Ե Վ ԽՈԱՄԵՑ ԿԱՄՅՈՆ.

- Իմ վիրավոր աչքերի մեջ
Չո պատկերն է, հայրենիք,
Չո անունը իմ շուրջենին
Դարձնել է թու յի թիթենոնիկ:

Թարտում է, թևահարում,
Մղձավանջ է, և կարծես,
Մթնում է լուս աշխարհն իմ դնմ
Ու... փլվում նմ հողին նս:

Բայց՝ մի վայրկյան: Աթափվում եմ
Եվ հրազնն ձնորիս:
Ուրի նլնում ննտվում առաջ՝
Ընկնըննրիս նտևից...



Ե Վ ԱՐԱՄԱՏՅԱ

- Թնժ մարտերի մնջ կոփկած
Տղաներով մնր արի
Կրկին ելնում ենք, ահա,
Թուրքերի դնմ կատաղի:

Կրկին ելնում ենք, ու թռող
Լավ իմանա թշնամին,
Որ ինչքան էլ համառի՝
Չի մոտենա Արցախին:


Մինչև շունչը մնր վնրջին,
Վնրջին կաթիլը արյան,
Հանուն մնր լուս գալիքի՝
Կմարտնչենք քաջաբար...

ԱՐԱՄԱՏՅԱ
ԱԼԵՔՍԵՅԻ
ՎԱՆՅԱՆ
(1971-1993)

Ծնվել է 1971-ի փետրվարի 2-ին: Հայրենի գյուղի միջնակարգն ավարտելուց հետո ընդունվել է Ստեփանակերտի գյուղատնտեսական տեխնիկումի անասնաբուժական բաժինը:

1989-91-ին ծառայել է Խորհրդային բանակի շարքերում: Զորացրվելուց հետո գյուղի ֆիդայական ջոկատի տղաների հետ մասնակցել է շրջանի մի շարք գյուղերի ազատագրմանը:

Զոհվել է 1993-ի դեկտեմբերի 27-ին, Մաղավուզի մերձակայքում, ականի պայթյունից:



**ԱՐԴՐԱՍԻԿ ԱՐՄԵՆԻ
ԳՐԻԳՈՐՅԱՆ**

(1967-1994)

Ծնվել է 1967-ի հունիսի 8-ին: Ավարտել է պյուղի ուրամյակը, իսկ Ն.Հոռարադի թ. 120 պրոֆտեխնուսումառանում ստացել էլեկտրաերակցողի ճանագիտություն, բայց խաղաղ աշխատանքով զբաղվելու բախտը վիճակված չէր նրան: Արցախյան շահժման հորձանուսում է հենց առաջին օրերից: Տիրապետության էր գեներատորը բոլոր տեսակներին: Մասնակել է մարտական գործողություններին՝ թելքաջարից մինչև Ղուբարլու: Վիրավորվել է բազմաթիվ անգամ: Չոհվել է 1994-ի ապրիլի 18-ին, Հանաղայայի ազատազրման համար մղված կատարի մարտուն:

Ի

Մ

Կ

**ԱՆԴՐԱՍԻԿ
ՀՐԱԺԵԾ ՏՎԵՑ
ԻՐ ԾՆՈՂ ՆԵՐԻՆ,
ԳՆԱՑ ԱՍԵԼՈՎ.**

- Ընկերներս այնտեղ՝
Մարտադաշտում ահեղ, -
Ես չեմ կարող մնալ,
Ես գնում եմ, մայրիկ:

Զննդանաս ինձնից,
Որ թողի քեզ մենակ,
Ես դեռ կգա՞մ մի օր,
Ես դեռ կգա՞մ:

Դու սպասիր հոյսով,
Դու սպասիր, մայրիկ,
Հաղթանակին մեր մեծ
Ու քո որդուն:

Ես դեռ կգա՞մ մի օր,
Ես դեռ կգա՞մ:
Իսկ թե հանկարծ...
Հանկարծ նթե... չգամ

Դու չլացե՞ս, մայրիկ,
Դու կսպասես հոյսո՞վ, -
Ես դեռ կգա՞մ,
Կգա՞մ,
Կգա՞մ,
Կգա՞մ...

ՈՒ Ե
Մ ԱՅԼԵՎԱ
ՀԱՅԱՍՏԵՐԵՑԻ.

- «Կգա՞մ»... Չեկա՛ր սակայն:
Բայց ննդացա՞նք քնզնից,
Խոտվլցի՞նք քնզնից,
Եղբա՞յր, զինվո՞ր...
Ո՛չ, սիրեցինք մենք քնզ,
Սպասեցինք միշտ քնզ -
Հուշարձանի տնսքով
Եկար մի օր:

Եկար ու կանգնեցի՞ր:
Եկար ու... հառնցի՞ր:
Եկար ու մնացիր
Երազիս մնջ:
Եկար՝ անխռոս ու լուս,
Դու՝ իմ զավի մրմուս,
Որ տառապեմ անհու՞յս,
Երկա՞ր, անվե՞րջ...

Եկա՞ր, դու, իմ կարոտ,
Զգալ չէիր կարող,
Զգա՞լ՝ ինչպե՞ս ես ես
Համարձակվում...
Դու կե՞սն ես իմ սրտի,
Իմ մնջ ապրե՞ս պիտի,
Ինձ հնտ քայլե՞ս պիտի
Իմ օրնում...



Հ
Ե
Տ
Գ
Ժ
Ո
Ռ
Յ
Ա
Ն
ԿԱՐԳ-ԱՎ

...Եվ դադարում են «ընդհատումները»,
Տղաները էլ ոչինչ չեն «ասում»,
Իմաստազորկ են թվում բառերը,
Որ ...նահանջում են, բաշվում, նվազում:

Ու տղաները գնում են նորից,
Որ ամուր պահեն իրենց... դիրքերը,
Խև անդառնալի կորսույան ցավից
Դեռ մղկտում են հարազատները:

«Կանգնած են» տղերքն՝ անհողդողի, անքնն,
Որ կայուն լինի խաղաղությունը...
...Եվ ավարտված է լուրջան իռապնն,
Բայց լուրջունը շարունակվում է:



ԱՐԻՍ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Տպագրված գրքերը՝

ՃԱՔԱԾ ԼՈՒԹՅԱՆ (բանաստեղծություններ),

1993, 48 էջ, տպ.՝ 1000:

ԱՆԴՐԱՄԻԿ, ԱՅՍԻՆՔՆ ԱՌԱՋԱՄԱՐՏԻԿ (ակնարկ), 1997, 32 էջ, տպ.՝ 1000:

ՈՒԵԱՑԱԾ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԱՐԱՐԱՏ ՂԱԶԱՐ-

ՅԱՆԻ <ԵՏ (ակնարկ), 1997, 24 էջ, տպ.՝ 400:

...ԵՎ ԱՅՍՊԻՍԻ ՃԱԿԱՏՆԳԻՐ (ակնարկ), 1998,

64 էջ, տպ.՝ 300:

ՂՈՂԱԾ ՀԻՇԱՏԱԿԻ (ակնարկ), 2000, 12 էջ,

տպ.՝ 300:

Պատրաստ են տպագրության՝

ԱՊՐԱԾ ՕՐԵՐԻ ԱՐՁԱԳԱՆՔՈՒՄՆԵՐ.

Գիղք առաջին (բանաստեղծություններ և
պոեմներ), 200 էջ:

ԱՊՐԱԾ ՕՐԵՐԻ ԱՐՁԱԳԱՆՔՈՒՄՆԵՐ.

Գիղք Երկրորդ (ակնարկներ), 200 էջ:

ԱՆՏԱՌԻ ԶԱՅՆԻՑ ԻՆՉՈՒ ԵՄ ՀՈՒԶՎՈՒ...
(բանաստեղծություններ), 48 էջ:

ԱՐԻ ՍԻՐԵՆՔ ՄԵՆՔ ՄԵԿ-ՄԵԿՈՒ... (սիրո քը-
նար), 64. էջ:

ԻՄ ՊԱՊԸ ԽԱՉՈՒՏՑ ԱՆԴՐԻՆ Է... (մանկական
բանաստեղծություններ), 32 էջ:

ՆԱՄԱԿ, ՈՐԸ ԴՈՒ ԵՐԲԵՔ ԶԵՍ ԿԱՐԴԱԼՈՒ...
(ակնարկներ), 80 էջ:

Գրական-գեղարվեստական հրատարակություն

**Արիս Արսենի Գրիգորյան
ԼՈՒԹՅԱՆ ՌՈՊԵ
(պոեմ)**

Խճքագիր՝ Հոմք Վաևյան
Նկարիչ՝ Զորիկ Գալստյան
Մըրբագրիչ՝ Ռուզան Գասպարյան
Լուսանկարիչ՝ Աշոտ Երամիջյան
Հանձնակարգչային շարվածքը և էջադրումը՝
Արամ Արեխյանի

Տպագրությունը՝ օֆսեթ:

Թուղթ՝ օֆսեթ:

Չափսը՝ 30X42 1/8:

Տառատեսակները՝

Mariam,

Arial Armenian,

Times Armenian:

1,5 հրատ. մամ.:

Տպագրանակը՝ 1000:

Գինը՝ պայմանագրային:

Դուք մեզ սի կոչեք ամհայս կորածն
Խմորու մ ենք, ճառի կ
Դուք մեզ հիշեցն օ
Մեր ամուսնը դուք պահեք օն առաջաւ
Ու սպասեք մեզ
Մեօք մի օն կօա օք
Կօա օք չ ո՞ն մեօք
Ապրու տօք լու օք

